Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

56 Բ-ԲԲ-0
1538-0

№ 87 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 87

ՄԵՔԵՆԱ-ՁԻԱ-ՅԵՋԱ ԿԱԼՈՆՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ա Ի 4420

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ԵԵՐԵՎԱՆ – 1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2082
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5068 (բ)
ՏԻՐԱԺ 10,000

631.15

V

ՄԵՔԵՆԱ–ՋԻԱ-ՅԵՋԱ ՋՈԿԱՏՆԵՐԻ ԱՇԽԱ-ՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ՝ ԸՍՏ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

A 1/4470

Մեքենա–յեզա–ձիա ջոկատները բաժանվում են բրիգադաների: Ամեն մի բրիգադայի վրա, մեքենա–յեզա–ձիա ջոկատի արտադրական ծրագրի համաձայն, ցանքսի տևողության ընթացքում կատարելու համար վորոշ աշխատանքներ են դրվում: Յուրաքանչյուր բրիգադայի տրվում և վորոշ հողամաս, վորը և հանդիսանում և նրա արտադրական խնդիրը: Իր հողամասի սահմաններում բրիգադան հանդիսանում և ինքնուրույն արտադրական միավոր, ըստ ըստ վորում նա պարտական և իր ժամանակին ու. ամենայն բարեխղճությամբ կատարել իր վրա դրած արտադրական աշխատանքները:

Աշխատանքների կազմակերպության, մեքենաների ըստ աշխատանքների դասավորման, որվա աշխատանքների կարգի և այլն հարցերում նա ղեկավարվում և մեքենա–ձիակայանի կողմից տրված կարգադրություններով:

Բրիգադաները, ըստ իրենց գործիքների և ունեցած քարշող ուժի, կազմակերպվում են այն հաշվով, վորպեսզի նրանք ինքնուրույն կերպով, համաձայն ծրագրի, կարողանան ի–

ընդ հողամասում սկսել և կատարել բոլոր տեսակի աշխատանքները։

Եթե բրիգադայի հողամասն ամբողջովին աշնան հերկ է, այդ դեպքում բրիգադան բաններնում է միայն փոցխեր ու ցանելու մեքենաներ, իսկ եթե բրիգադային հատկացված հողամասը վարած չէ, այդ դեպքում նա ունենալու յե յերեք տեսակ գործիքներ—գութաններ, փոցխեր և ցանելու մեքենաներ։ Թույլատրելի չէ, որ բրիգադայից մեկն ունենա, որինակ, միայն փոցխեր, քանի որ այդ դեպքում ցանելու աշխատանքները պետք է կատարի մի ուրիշ բրիգադա։ Մի բան, որ անընդունելի յե, քանի որ դրանով կխախտվի մեքենա-ձիակայանի այն սկզբունքը, ըստ որի բոլոր տեսակի աշխատանքները կատարվելու յեն միաժամանակ։

Եթե այդպես չարվի, այդ դեպքում աշխատանքների մեջ տեղի կունենան ընդհատումներ, դադարումներ։ Մեքենաներն ու քարշող ուժը կոգտագործվի վոչ լրիվ կերպով և այլն, իսկ դրանից զգալիորեն կտուժի արտադրական ծրագրի կատարումը։

Չպետք է մոռանալ, որ մեքենա-յեզաձիակայանի ջոկատի գլխավոր առավելությունն այն է, որ զանազան աշխատանքներ միաժամանակ կատարելով, բարձրանում է գործիքների և նրանց քարշող ուժերի արտադրողականությունը։

Որպեսզի բրիգադան կարողանա միա-

ժամանակ և անընդհատ կազմակերպել աշխատանքը—անհրաժեշտ է նրա հողամասը մասը բաժանել չորս այնպիսի մասերի, որպեսզի ամեն մի մասի վրա կատարվի միանման աշխատանք: Հողամասի բաժանման խնդրում մեքենա-յեղա-ձիա ջոկատը վոչ մի դեպքում սխալներ չպիտի գործի, որպեսզի դրա հետևանքով գարնանային աշխատանքների մեջ ընդհատումներ չառաջանան:

Մեքենա-յեղա-ձիա ջոկատի տրամադրության տակ գտնված հողամասը, աշխատանքներն սկսվելուց յերկու շաբաթ առաջ, պետք և չտվեն ջոկատի գեկավարները բրիգադաների հետ: Այդ աշխատանքին մասնակցելու յե նաև գյուղատնտեսը. այդպիսով, ահա, սահմանվածվելու յե ամեն մի բրիգադային հատկացվելիք հողամասը:

Մեքենա-յեղա-ձիա ջոկատը հողամասերի բաժանումը կատարելիս հողակտորները պիտի այնպես դասավորի, որպեսզի ամեն մի բրիգադա միանման և անընդհատ աշխատանքներ կատարելու հնարավորություն ունենա:

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Մեքենաները պետք է նպատակահարմար կերպով ընտրված և դասավորված լինեն: Յեթե բրիգադան տարբեր մարքաների և սիստեմների գործիքներ ունի, պետք է այնպես

անել, վորպեսզի միախուփանի գումարները կենտրոնացված լինեն մի բրիգադայում, յերկխուփանիները մի այլ բրիգադայում: Նույն կերպ պետք է վարվել 11, 13 շարքացան մեքենաների վերաբերմամբ և այլն:

Գործիքներն այսպես դասավորելուց հետո, պետք է նրանց՝ ըստ իրենց համարների՝ մշտական տեղ հատկացնել շարքերի մեջ:

Զի քշողները և սարքավորված ձիերը իմանալով իրենց տեղը, ուսումնասիրելով իրենց հարևանների շարժումը ավելի լավ են հարմարվում թե դրացու և թե ամբողջ շարքի շարժմանը, վորով և խույս են տալիս ավելորդ կանգնումներից և դժբախտ դեպքեր չեն պատահում թե՛ անասունների հետ և թե՛ ընդհանրապես:

Պետք է նաև վորոշել սարքավորված ձիերի մեկը-մյուսից ունենալիք հեռավորությունները, թույլ չտալով այդ ուղղությամբ վորևե խախտում: Փոցիը-փոցիից պիտի ունենա 20-ական մետր, իսկ շարքացանը-շարքացանից՝ 40-ական մետր հեռավորություն: Գործիքների դասավորության մեջ յեղած հեռավորության ճիշտ պահպանումը հնարավորություն է տալիս, վոր, յեթե գործիքներից մեկն ու մեկը փչացել է, կամ յեթե սարքավորված ձիերի հետ վորևե դժբախտություն է պատահել, անմիջապես դրանց դուրս բերել շարքից, առանց խանգարելու ամբողջ բրիգադայի շարժումը:

ՄԵՔԵՆԱ-ՅԵԶԱ-ՁԻԱ-ՁՈԿԱՏԻ ՅԵՎ ՆՐԱ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Այս տարով մեքենա-յեզա-ձիա ջոկատի և բրիգադների ծավալուն լինելուց, մի բան, որ տեղի չի ունենում, յերբ միևնույն տեղում կուտակվում են մեծ թվով գործիքներ և անասուններ, միևնույն ժամանակ անթույլատրելի յե նաև կազմակերպել փոքրիկ մեքենա-յեզա-ձիա ջոկատներ ու բրիգադներ: Ցեվ սա ոչ այն պատճառով, որ փոքրիկ կազմակերպությունների չի ստացվում աշխատանքի ցած կալի արդյունք:

Նկատի ունենալով այդ և հաշվի առնելով գործիքների և քարշող ուժերի ամենամեծ արտադրողականության ապահովումը— վերցնում են արտադրական հողամասի չափը:

Բերենք հետևյալ մոտավոր հաշիվը: Որինակ, յեթե ընդունենք, որ ջոկատն իր հողամասում մշակելու յե 300 հեկտար և այդ հողը մասնատված և վեց բրիգադների մեջ և ամեն մեկին ընկնում և 50-ական հեկտար: Այսպիսով, քանի որվա մեջ ամեն մի բրիգադային վարելու համար ընկնում և 50 հեկտար, իսկ մի օրում 2,5 հեկտար: Դրա համար մի բրիգադային ընկնելու յե հինգ դուքան — հաշվելով, որ մի դուքանը մի օրում կվարի կես հեկտար, ամեն մի դուքանին հարկավոր

կլինի 10–ական յեղ կամ բոլոր 5 դուքթաններին՝ 50 յեղ։

Փոցխելու համար նույնպես ամեն մի բրիգադային 10 որում ընկնում է որական 50–ական հեկտար։ Դրա համար բրիգադան պիտի ունենա յերկու յերկկողմանի փոցխ։ Ամեն մի փոցխին յերկու ձի, ուրեմն՝ բրիգադան պիտի ունենա 2 փոցխ և չորս ձի։

Ցանքը.—50 հեկտար ցանելու համար անհրաժեշտ է, վոր բրիգադան ունենա 2 շարքացան մեքենա, վորոնցից ամեն մեկը ցանելու յե որական 3–ական հեկտար, իսկ ամեն մի շարքացանին տրամադրվելու յե 3–ական ձի։

Այսպես, ուրեմն, ամեն մի բրիգադան ունենալու յե հետևյալ թվով գործիքներ և կենդանիներ.

Դուքթաններ . . .	5	Յեղ . .	50
Փոցխեր	2	Ձի . . .	4
Շարքացան մեքենա	2	Ձի . . .	9

Բրիգադաների ողակները կամ շարքերը (դուքթաններ, փոցխեր, շարքացաններ) արագ շարժվելու համար պետք է միմիանցից անկախ լինեն։ Ու քանի վոր ամեն մի շարք պիտի կատարի վորոշ աշխատանք— պարզ է, վոր բոլոր աշխատանքները նրանք կկատարեն ճիշտ իր ժամանակին։

ՄԵՔԵՆԱ–ՑԵՂԱ–ՁԻԱ ՋՈԿԱՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջոկատի դեկավարը.— Մինչև աշխատանքների սկսելը, ջոկատի դեկավարը նշանա-

կում և բրիգադիրներ (պետեր) և նրանց տալիս և ճիշտ հրահանգներ։ Ընտրված բրիգադիրների ցուցակն ուղարկվում է Վարչության ի հաստատություն և բրիգադների մասնակցությամբ հրավիրվում են բրիգադներում աշխատող ուժեր (աշխատանքն սկսելուց յերկու շաբաթ առաջ)։

Աշխատանքի շրջանում ղեկավարն ամեն յերեկո հրավիրում և մեքենա-ձիակայանի բոլոր բրիգադիրներին՝ հաշվի տալու որվա մեջ կատարած աշխատանքների մասին և հաջորդ որվա աշխատանքների համար հրահանգներ տալու։ Նա կազմակերպում է իր բրիգադների միաժամանակ դաշտ դուրս գալու կարգը, նշանակում է նրանցից ամեն մեկի բանակատեղը, վորոշում, թե ամեն մեկ բրիգադ ամբողջ աշխատանքի ընթացքում վո՞ր հողամասի վրա յե աշխատելու։ Նա յե, վոր ամեն որ ստուգում է բրիգադներից յուրաքանչյուրի կատարած աշխատանքը և հսկում է, վոր նրանք կատարեն նախապես վորոշած աշխատանքը։ Ղեկավարը բրիգադիրների հետ նախապես փորձնական ցանք է կատարում կես հեկտարի վրա— վորոշելու համար մեքենա-ձիակայանի ցանքի նորմաների միջին չափը։ Նա կարգադրում է, վորպեսզի սերմերը պահեստներից բերվեն բրիգադների բանակատեղը և հսկում է, վոր բրիգադների կողմից մթերքները գործադրվեն նպատակահարմար կերպով։ Ամեն որ ղեկավարն ստուգում

և կատարած աշխատանքի հաշվառումը, հսկում է կենդանիների ի՛նչ վիճակում լինելու, նրանց խնամելու գործը բրիգադներում և կերի տնտեսական գործադրումը: Մինչև աշխատանքի դուրս գալը նա հսկում է ջոկատի, ինվենտարի և յեզների ու ձիերի սարքավորման թվահամարումը— բաժանելով այն բրիգադների միջև: Նա հոգ է տանում, վորպեսզի բրիգադներն ունենան գործիքներ ու սարքավորման անհրաժեշտ պահեստի փոխմասեր (լծելու սարք, կաշեգոտիներ, պարաններ, պատրոմկաներ և այլն): Նա հրավիրում է դարբիններ, լծասարքեր կարողավորող, սերմ փոխադրող աշխատավորներ և նրանց հետ խորհրդակցելով՝ կազմակերպում է շարժական դարբնոցներ, ապահովելով դրանց անհրաժեշտ նյութերով, քսակներով, ամաններով և այլն:

Ղեկավարը հսկում է, վոր դարբինները, յեզների ու ձիու սարք կարողները կատարեն տրված աշխատանքների նորմաները, իսկ սերմացու փոխադրողները կրեն սահմանված սերմերի քանակը: Նա կարգադրում է փոխադրողներին, թե վո՞ր բրիգադային՝ վո՞ր քան սերմ պետք է հանձնեն, թե ո՞ւր պետք է մշտապես լինեն դարբնոցները ու լծասարք կարողները: Ջրկիրների միջոցով բրիգադներին ապահովում է ջրով, նշանակում է, թե վո՞ր բրիգադան պետք է ձիերը ջրելու տանի և թե վո՞ր

բրիգադային պետք է ջուր տարվի նրա բանակատեղում:

Նա է, որը անդադար հսկում է խոհարարի աշխատանքներին և կերակրի լավ հատկությունը, հսկում է տավարին կեր ավելացնելի վրա, որպես և այն, թե ամեն մի բրիգադա ի՞նչպես է կատարում իրեն հանձնարարված աշխատանքը: Նա կազմում է հաշվետվություն ըստ բրիգադաների և հսկում է, որ բրիգադաները ճշտորեն տանեն աշխատանքների հաշվառումը՝ ըստ ցուցակների (տաբելների): Ղեկավարը կազմում է մեքենա-ձիակայանի կողմից տարված աշխատանքների ընդհանուր աշխատացուցակը (տաբել) և այդ բոլորը ներկայացնում է կոլխոզի վարչությանը:

Մոշոր կոլխոզներում, ուր մի քանի արտադրական հողամասեր կան, գարնանացանքի աշխատանքների ղեկավարությունը դրվում է Վարչության լիազորի վրա, որը հանդիսանում է միաժամանակ տվյալ արտադրական ջոկատի լիազորը:

ԲՐԻԳԱԴԻՐ

Բրիգադիրը բրիգադայի ղեկավարն է: Նա պատասխանատու է ջոկատի ղեկավարից ստացած արտադրական ծրագրի կատարման համար: Նա ջոկատի ղեկավարների հետ միասին մասնակցում է իր բրիգադայի համար անհրաժեշտ աշխատավորներ ընտրելու գոր-

ծում։ Նա աշխատավորների մեջ բաժանում է նրանց կատարելիք աշխատանքները և դրանց մեջ ըստ թվահամարի բաշխում է ունեցած կենդանի և մեռյալ ինվենտարը։ Բրիգադիրը նախապես ստուգում է իր խմբին բաժին ընկած տավարը, գործիքները և լծասարքը, կազմակերպում է իր աշխատավորների փորձնական նպատակով դաշտ դուրս գալը։ Մինչև աշխատանքների սկսելը, նա իր խմբի աշխատավորներին հասկացնում և բացատրում է իրենց պարտականությունները, ինչպես նաև բացատրում է բրիգադայի և մեքենա-յեզաձիա ջոկատի աշխատանքային և արտադրական ծրագրերի հիմնական խնդիրները։

Բրիգադիրը նպաստում է, վորպեսզի բոլոր աշխատավորները համաձայն մեքենա-յեզաձիա ջոկատի ղեկավարի տված աշխատանքի ծրագրի՝ կազմակերպված ձևով՝ իրենց տավարով և մեքենաներով ճիշտ ժամանակին ու ժամին դաշտ դուրս գան։

Ջոկատի ղեկավարի հետ միասին բրիգադիրը նշանակում է բրիգադայի բանակատեղը, խոհանոցի, ախոռների և մսուրների տեղը և այլն։ Իր հողամասի հետ մանրամասն ծանոթանալուց հետո, նա նշանակում է այն տեղը, վորից սկսվելու յե բրիգադայի աշխատանքը, նա տավարն ու մեքենաները դասավորում է վորոշ կարգով։

Ցանքի նորմաները վորոշելու համար բրիգադիրը ջոկատի ղեկավարի ցուցմունքներով

կատարում և փորձնական ցանք։ Հսկում է, վոր աշխատանքի ժամանակ ցանողները ճշտիվ կատարեն ցանքի նորմաները և ցանող մեքենաները բեռնված ժամանակ իրար չկանգնեն։ Հսկում է, վորպեսզի փոցխերն իր ժամանակին մաքրվեն և վնասվելու դեպքում՝ անմիջապես ուղարկվեն համապատասխան դարբնոց կամ սրբ կարողներին՝ խսկույն և յեթ նորոգելու փչացած մեքենան — փոխելու նրա այս կամ այն մասը։

Բրիգադիրը հսկում է նաև բրիգադայի համար պատրաստվող ճաշի՝ իր ժամանակին պատրաստ լինելու աշխատանքներին և մատուցարարելուն, ինչպես և բրիգադայի համար ջուր բերել տալու գործի վրա։

Բրիգադիրը պատասխանատու է բրիգադայում որվա աշխատակարգը պահպանելու համար, ըստ վորում նա է տուգանում բրիգադայի անկարգապահ աշխատավորներին, հայտնելով այդ մասին կայանի գեկավարին։ Նա նշանակում է աշխատանքի գալու, հանգստի և դադարի ժամանակն ու ժամերը ինչպես աշխատավորների, նույնպես և տավարի համար՝ համաձայն սահմանված կարգ ու կանոնի։ Նա տանում է ջոկատի գեկավարից կերը և այն հանձնում կերը բաշխող ավագին։ Հրահանգում է, վորպեսզի կերի թե քանակը համապատասխանի նորմային և թե կերակրելը կատարվի ճիշտ ժամանակին։ Բրիգադիրը պատասխանատու է բրիգադային տված ամբողջ

ինվենտարի, նյութերենի և պարենի կանոնավոր ու խնամքով պահպանման և գործածության համար:

Կենդանիների հիվանդության դեպքում բրիգադիրն արձանագրություն և կազմում և հիվանդ անասունն ուղարկում որպես անասնաբուժակին, յեթե տեղում դժվար և հիվանդ անասունին քննելը և ոգնություն հասցնելը:

Ջոկատի ղեկավարը, տրված հրահանգների համաձայն, կազմում է բրիգադայի կատարած որվա աշխատանքի հաշվետվությունը: Նա նպաստում է բրիգադաների աշխատակիցների մեջ սոցմրցում կազմակերպելու գործին. նա յե բաժանում լավ կատարած աշխատանքի համար ստացված մրցանակները:

Բրիգադիրը, առանց ջոկատի ղեկավարի թույլտվության, իրավունք չունի բրիգադայի աշխատանքի շրջանից հեռանալ, բացակայել:

ՏԱՎԱՐԱՊԱՀ

Տավարապահը (յեզապան, ձիապան) պատասխանատու յե իրան լծելու համար տված անասունների, լծասարքի ամբողջության: Նա՝ ըստ բրիգադիրի տված նշանի դուրս և բերում, լծում և աշխատանքի տեղն ե տանում լծած անասունները, հսկում և ամեն մի անասունի առողջական դրության վրա՝ աշխատանքի ժամանակ և նրանց հսկաստար բեռ-

նմանությանը, նա մաքրում է փոցխերն ու նրանց առամները և հավաքում դաշտում ցրված մոլախոտերը, յեթե նրանք քիչ են: Նա կատարում է ինվենտարի և սարքի թեթև նորոգում, ոգնում է ցանողին շարքացանը սերմով լցնելու: Աշխատանքի դադարի ժամանակ նա արձակում է տավարը և կապում սխտոնների՝ հանգստանալու կամ կերակրելու:

Տավարապահը տավարին չլսում է վորոշված ժամերին և աշխատանքի ժամանակ հեռանում, վոր իր և իրանից առաջ գնացող լուծերի միջև պահպանված լինի բրիգադիրի կողմից առհմանված հեռավորությունը:

ՑԱՆՈՂ

Ցանողն առուգում է ցանող մեքենան թե՛ դաշտ ուղարկելիս և թե՛ աշխատանքն սկսելուց առաջ. նա հետևում է, վոր սերմարկղից սերմերը հավասարաչափ հոսեն, մաքրում է մեքենայի խոչիկները. հսկում է, վոր ցանելը կատարվի կանոնավոր և բաց-չցանված տեղեր չմնան: Նա կանոնավորում է ցանելիք սերմի նորմաները: Սերմացուն վորոշված ժամանակում լցնում է սերմարկղը և թույլ չի տալիս, վոր տեղի ունենան ընդհատումներ: Աշխատանքներն ավարտելուց հետո նա քարշակները վերադարձնում է բրիգադիրին, ոգնում է տավարապահին լծելու և արձակելու տավարը:

ԳՈՒԹԱՆՈՂ

Գուլթանողը հսկում է, վորպեսզի վարի ժամանակ լծված տավարը համույժ լինի, նա յուղում է գուլթանի յուղելու մասերն ու տեղերը և ուշք է դարձնում, վոր գուլթանը կանոնավոր աշխատի: Գուլթանողը պատասխանատու յե վարի հատկության համար, նա կանոնավորում է վարի խորությունն ու լայնությունը, չթույլ տալով, վոր շեղումներ լինեն և չվարած-բաց տեղեր մնան: Նա հանում է գուլթանը հողից և հողի մեջ է գցում շրջելիս: Գուլթանողը կատարում է գուլթանի թեթև նորոգումները, ոգնում է տավարապահին արձակել և լծել տավարը:

ԱՎԱԳ ԿԵՐԱԿՐՈՂ

Սա հոգ է տանում, վորպեսզի բրիգադայի տավարն աշխատանքի ամբողջ ընթացքում կանոնավոր կերակրվի: Նա պատասխանատու յե տավարի դրությանը նրանց յերկարատև հանգստի միջոցին՝ թե՛ ցերեկը և թե՛ գիշերը, վորը նա փոխեփոխ կատարում է իր ոգնականի հետ: Նա պատրաստում է տավարի կերը մինչև նրանց գալը և ախոռներում կամ մսուրում կապելը: Ավագ կերակրողը բաց է թողնում տավարին հատկացված կերը—ըստ նախապես սահմանած նորմաների: Առավոտյան շուտ վեր է կացնում տավարին և կեր տալիս, զարթեցնում է տավարապահին, վոր-

պեսպի լծելուց առաջ տավարը ջրի։ Նա հրամայում է, որ ընդհատումների ժամանակ տավարը կապված լինի։ Նա հոգ է տանում, որ բրիգադայի տավարի կերաբաժինն իր ժամանակին բերվի բանակատեղ, բրիգադիրի միջոցով, մինչև աշխատանքներն սկսելը, պատրաստում է տավարին հարկավոր կերը, ՀՐՈՒՐՆԵՐԸ, նոմեր և այլն։ Ավագը բրիգադիրին հաշիվ է տալիս կերցրած կերի և իրեն հանձնված իրերի մասին։ Նա բաժանում է աշխատանքն իր և իր ոգնականի միջև։ Ոգնականն իր պաշտոնավարության ժամանակ պարտական է յենթարկվել ավագի որինական բոլոր կարգադրություններին։

ԲՐԻԳԱԴԱՅԻ ԽՈՀԱՐԱՐԸ

Խոհարարը յենթարկվում է բրիգադիրին։ Բանվորների դաշտ դուրս գնալուց առաջ, բրիգադիրի կարգադրությամբ, խոհարարը ժողովում է բաժնեքարտերը (պայոկ). Նա բրիգադիրի հետ սահմանում է բանվորների բաժնեչափը։ Դաշտ դուրս գալուց մի քանի որ առաջ նա վորոշում է բրիգադայի համար կազմվելիք խոհանոցի (ոջախի) տեղը։ Կազմակերպում է ժամանակավոր խոհանոց և պատրաստում վառելիքի պաշար։ Խոհարարը պատրաստում է կերակուրը, լվանում և պահում է բանվորների ամանեղենը, բաժանում է ստացված հացը և հաշիվ է տալիս բրիգադիրին՝ իր միջոցով գործադրած մթերքների և

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

վաստակի համար։ Նա պատասխանատու է ճաշն իր ժամանակին պատրաստ լինելու համար,—այսինքն բանվորների ճաշելու դադար ժամին, վորպիսին նախապես սահմանված և լինում բրիգադիրի կողմից։

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ՅԵՎ ԴԱՍԱՎՈՐԵԼ ՋՈԿԱՏԻ ԻՆՎԵՆՏԱՐԸ

Յեթե ջոկատը չի գտնվում կոլխոզների կամ սրանց միությունների կենտրոնում, և կամ յեթե նա չունի այնքան շենքեր, պահեստներ, վորոնց մեջ կարելի լինի կենտրոնացնել թե՛ ամբողջ ինվենտարը և թե՛ սերմացուն և դրանց ապահովել բանվորների անհրաժեշտ թվով, այդ դեպքում ավելի նպատակահարմար է միանգամից բաժանել սերմացուն, ինվենտարը, բանող անասունները և սպասարկող անձանց, ըստ բրիգադների՝ կոլխոզներում վերջիններիս կողմից տրամադրած շենքերում, պայմանով, վոր ինվենտարի, սերմերի և կերի ամբողջ պատասխանատվությունն ընկնի բրիգադների վրա։

ԿԱՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Կապը վարչության և բրիգադների հետ և վերջիններիս կապը ջոկատի հետ պետք է այնպես կազմակերպված լինի, վորպեսզի յերկուսաթք կարողանան ճշտել, հրահկել, ղեկավարել ու կատարել արտադրական

բոլոր աշխատանքները։ Դա կազմակերպվելու է այսպես. կոլխոզի վարչությունը պետք է ունենա մի հատուկ աստիճանավոր, որն ստանում է բրիգադաներից իրենց աշխատանքների մասին լրիվ տեղեկանքներ և շրջելով բրիգադաներն՝ ստուգում է նրանց աշխատանքը և վարչությանը տեղեկացնում աշխատանքների ընթացքի մասին։ Նա ամեն որ ջոկատի վարչությանը զեկուցում է կատարած աշխատանքների մասին. կայանի զեկավարը նույնպես տեղեկություններ է ստանում բրիգադաներից։ Այսպիսով, յեթե որևէ տեղ աշխատանքն ընդհատվել կամ խոնդարվել է, հնարավորություն է ստեղծվում իսկույն և յեթե վերականգնել այն, ձեռք առնելով համապատասխան միջոցներ։

Այսպիսով, այդ հաշվետվությունը հետևյալ ձևն է ընդունում. որինակ, բրիգադա № 3-ը հաղորդաս № 1-ում կատարել է՝ վար 28 հեկտար, փոցխել է՝ 28 հեկտար, ցանել է՝ 28 հեկտ., աշխատանքը կանգնել է չնորհիվ նրա, որ ջարդվել է 2 դուքան, 3 փոցխ և 1 շարքացան։ Ընդամենն աշխատանքի ընդհատումը տևել է 1 ժամ։ Ծրագիրը կատարված չէ..... հեկտ., կամ գերակատարված է.... հեկտ.։

Այսպիսի տեղեկանքներով հնարավորություն է ստեղծվում ջոկատին վոչ միայն տեղյակ լինել աշխատանքի ընթացքին, այլև իսկույն ձեռք առնել համապատասխան մի-

ջոցներ՝ կանխելու դաղարը կամ լրացնելու այս կամ այն բրիգադայի հետ պատահած դժբախտ դեպքերը և դրանով բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը։

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Մինչև գարնանային աշխատանքների սկսվելը կոլխոզի վարչությունը պիտի հրապարակի մրցանակաբաշխման ֆոնդից բաշխվելիք գումարների մասին, որոնք տրվում են մեքենա-յեզա-ձիա ջոկատի այն բրիգադաներին, որոնք աշխատանքն ամենից լավ և ամենից արագ են կատարել։ Ֆոնդի գումարը սահմանում է լիազորական ընդհանուր ժողովը՝ տնտեսական տարվա վերջին։

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մեքենա-յեզա-ձիա ջոկատում պետք է տիրի աշխատանքային ամենախիստ կարգապահություն, որով միայն հնարավոր է դառնում կայանի գոյությունը և նրա կողմից տարվելիք աշխատանքների իրացումը։ Մանավանդ դա կարևոր է գարնան աշխատանքների ընթացքում, երբ կուլակությունն ամեն տեսակ դավեր է լարելու՝ խախտել, վարկաբեկել և քայքայել ջոկատի կողմից տարվող աշխատանքները։

Ուստի անհրաժեշտ է ամենավճռական պայքար տանել այդպիսինակ յերևույթների դեմ, կոլխոզի յուրաքանչյուր անդամին,

յուրաքանչյուր աշխատավորին հասկացնելով, վոր աշխատանքային կարգապահությունը կոլեկտիվ աշխատանքի պարտադիր պայմանն է, առանց վորի չի կարող լինել կազմակերպված աշխատանք:

ՈՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՋՈԿԱՏԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Բրիգադաներում աշխատանքն իր ժամանակին, ժամին ու ըստ ծրագրի ճիշտ կերպով կատարելու նպատակով անհրաժեշտ է ղեկավարվել աշխատանքային հետևյալ կարգ ու կանոնով, վոր ընդունում և գործադրում է Ջոկատն իր աշխատանքների ընթացքում.

ա) բրիգադայում կիրառվող աշխատանքային կարգապահության պատասխանատվությունն ընկնում է բրիգադիրի վրա: Այն աշխատողները, վորոնք խախտում են աշխատանքային կարգապահությունը, նրանց տուղտնում և պատժում է բրիգադիրը.

բ) ժամանակը ճիշտ վորոշելու և ըստ այնմ աշխատանքներ կատարելու համար յուրաքանչյուր բրիգադային տրվում է ժամացույց—յեթե ինքը բրիգադիրը չունի:

Աշխատանքների ընդհատում անելու և ճաշի պատրաստ լինելու մասին խոհարարը հայտնում է բրիգադիրին՝ հատուկ նշանով—սուլոցով կամ դրոշակ ծածանելով:

Բրիգադայի աշխատավորների ընտրությունը կատարում է բրիգադիրը՝ կայանի ղեկավարի հաստատությամբ:

Աշխատավորների ընտրության համար սահմանվում է հետևյալ կարգը.—բրիգադիրները ջոկատի դեկավարից ստանում են կարգադրություն՝ աշխատավորների ընտրության մասին և նարյադների բլանկներ։ Բրիգադիրները լրացնում են նարյադները և հանձնում ընտրված աշխատավորներին։ Բլանկների մեջ նշանակվում են, թե ի՞նչ աշխատանք և կատարելու աշխատավորը և աշխատանքի տևողությունը։ Կոլխոզնիկն ստանալով այդ պաշտոնագիրը, համարվում է կցված վորոշ բրիգադայի, վորից հետո նա ստանում է վորոշ թվով լծասարք և գործիքներ։ Այս բոլորն էլ միևնույն թվահամարով։ Ցանքից մի շաբաթ առաջ նարյադ ստացողն իրավունք չունի հեռանալ աշխատավայրից՝ առանց բրիգադիրի թույլտվության։ Նա պարտական է հաճախել այն բոլոր դրույցներին ու հրահանգչական խորհրդակցություններին, վորոնք նշանակվում են բրիգադիրների կողմից։

Ուշադիր կերպով պիտի հաշվի առնել կոլխոզնիկի ընդունակություններն ու հակումները այս կամ այն աշխատանքի համար և նրան տալ համապատասխան այնպիսի աշխատանք, վորտեղ նա կարող է ցույց տալ ամենից բարձր արտադրողականություն։ Աշխատանք ստացող կոլխոզնիկն իրավունք չունի հրաժարվել այն կատարելուց, ինչպես

նաև նա չպետք է հսկաճառի բրիգադիրի դեմ՝ իր նշանակման խնդրի առթիվ:

Աշխատավարձը ընտրելուց հետո բրիգադիրն այդ ցուցակի պատճենն ուղարկում է մեքենա-յեզա-ձիա ջոկատի վարչությանը:

Ցուցակը կազմվում է հետևյալ ձևով.—

Աշխատողի ազգանունը, անունը ու հայրանունը	Ինչ տեսակ աշխատանքի յե նշանակված	Աշխատողին հանձնված լծասարքի և ինվենտարի №-ը

Ցուցակը հաստատելուց և աշխատանքի տեսակն ու բնույթը վերջնելուց հետո բրիգադիրը թղթերն հանձնում է աշխատավարձին, նշանակելով աշխատանքի ժամերը, ծանոթացնելով լծասարքերի, մեքենաների ու գործիքների հետ՝ ըստ համարների:

Նույն յեղանակով կատարվում է նաև մյուս տեսակի աշխատավարձների ընտրությունը (դարբիններին, լծասարքեր շինողների և այլն):

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՅԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԵՔԵՆԱ—ՅԵԶԱ—ՁԻԱ—ՋՈԿԱՏՆԵՐՈՒՄ

Սերմացվի մատակարարումը.—Ջոկատի սերմացուն պահվում է համապատասխան շենքերի մեջ: Սերմացուն մի քանի պահեստ-

ներում պահելը ցանկալի չէ։ Ավելի նպատակահարմար է սերմացուն կենսաբռնացնել ընդարձակ չենքերում։ Դրանով հեշտանում է սերմերի դաշտ փոխադրելը։

Սերմերի կանոնավոր պահպանման պատասխանատվությունն ընկնում է ջոկատի ղեկավարների վրա։ Սերմեր պահելը պետք է հանձնել դրա համար ընտրված հատուկ մարդկանց։

Ջոկատի ղեկավարը նախապես պետք է հաշվի առնի ամեն մի բրիգադային տրվելիք սերմերի քանակը՝ ըստ նրանց արտադրական ծրագրի։

Պահեստներից սերմացուն դաշտ փոխադրելու համար հատկացվում են հատուկ սայլեր, ավտոմոբիլներ, ըստ վորում նկատի յի առնվում դաշտի հեռավորությունը պահեստից, փոխադրության համար անհրաժեշտ ժամանակը և այն, վոր սայլերը լրիվ բեռնավորված լինեն։

Սերմն իր ժամանակին և պահանջված քանակով չտանելու համար պատասխանատու յի սայլապանը կամ շոֆերը։

Սերմը տարվում է բրիգադային բանակատեղին, վորտեղից ամեն մի բրիգադա իր սայլերով սերմը փոխադրում է շարքացանների մոտ՝ սրանց գտնված տեղերում։ Այս աշ-

խառանքները ղեկավարում և բրիգադիրը— վորը և ցույց և տալիս, թե սայլապանը վո՞ր կետին, ինչքա՞ն սերմացու և ի՞նչ պետք և հասցնի:

Կերի մատակարարումը.—Կերի անհրաժեշտ քանակը վորոշվում և ջոկատում գրանված և բրիգադաներում յեղած անասունների դլխի թվի ու դրանց համար սահմանված կերի նորմաների համաձայն:

Դարմանը, խոտը տարվում և բրիգադաների կանգնած տեղերը՝ նախքան սրանց դաշտ՝ աշխատանքի դուրս դալը: Կերն այստեղ բերվելով դրվում և համապատասխան բրիգադայի վրա, վորը և պատասխանատու յե կերի պահպանման և գործադրության համար:

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Յուրաքանչյուր բրիգադա աշխատանքի ընթացքում պետք և ունենա իրեն անհրաժեշտ ինվենտարը, վորի ճիշտ ցուցակը կազմում և ամեն մի բրիգադիր՝ ջոկատի ղեկավարի հետ համաձայնության դալով:

Ցուցակները պետք և այնպես կազմված լինեն, վորպեսզի յուրաքանչյուր բրիգադա ունենա իրեն անհրաժեշտ ինվենտարը:

ՑՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ԱՆՀՐԱ-ԺԵՇՏ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՑՈՒՑԱԿԸ

№	ԱՆՈՒՆԸ	ՔԱՆԱԿԸ		
1.	Նավեր	Ըստ բրիգադ.	կազմի	
2.	Ախոռներ ձիերի համար	»	»	»
3.	Ձիերը ջրելու տաշտեր	»	»	»
4.	Դուլլեր	»	»	»
5.	Ջրի տակառներ	»	»	»
6.	Ձիուն կերակրելու տոպրակներ	»	»	»
7.	Ցեզների համար կապեր	»	»	»
8.	Ցերկաթե յեղաններ—քյառեշներ	»	»	»
9.	Փոցխեր	»	»	»
10.	Բահեր յերկաթե	»	»	»
11.	Թիյեր փայտի	»	»	»
12.	Կացիններ	»	»	»
13.	Պահեստի կացիններ	»	»	»
14.	Վրաններ	»	»	»
15.	Սերմ ծածկելու բրեզենտներ	»	»	»
16.	Վառելափայտ խոհանոցի համար	»	»	»
17.	Կաթսաներ, դանապան սմաններ	»	»	»

Բացի սրանից, անհրաժեշտ է ունենալ պահեստի մասեր—մեխեր, «կլյուչներ» դուռթաններին և փոցխերի պատուտակների հա-

մար, փոցխերի համար պահեստի ատամները, պահեստի լուծերը, խամուտները, թիլերը, բահերը, թել, շպաղատ, յերկաթալար, քսելու մազ, քլունգներ, կացիններ և այլն:

ԻՆՎԵՆՏԱՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Փորձը ցույց է տվել, վոր ընթացիկ նորոգություններ կատարելու համար անհրաժեշտ պատրաստություններ չունենալը՝ մեծապես ազդում է աշխատանքի արտադրողականության վրա:

Ուստի մի կամ յերկու բրիգադաներին կից անհրաժեշտ է ունենալ ինվենտար նորոգող շարժական արհեստանոցներ: Պետք է ունենալ յերկու տեսակ արհեստանոց՝ մեկը դարբնոց—թեթև վերանորոգումները տեղն ու տեղը կատարելու համար և ապա մի հատ ել լծատարքի արհեստանոց (շորնյա)՝ անասունների լծատարքը վերանորոգելու համար: Դրանք պետք է կազմակերպվեն Ջոկատի կողմից նախքան բրիգադաների աշխատանքի դուրս գալը: Արհեստանոցների համար անհրաժեշտ ատրքավորումը նախապես պետք է դնի կոլխոզի վարչությունը և իր ժամանակին այն ուղարկի բրիգադաներին, հիշյալ արհեստանոցները կազմակերպելու համար:

Իսկ գլխավոր արհեստանոցին նորոգելու համար պիտի ուղարկվեն միայն այն գործիք-

ներն ու մեքենաները, վորոնք չեն կարող նորոգվել բրիգադաներին կից արհեստանոցներում։

ՏԱՎԱՐԻ ԿԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԱՄԵԼՈՒ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԿԵՐՊՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Տավարի խնամքն ու նրանց կերակրելը կատարվում է բրիգադաներում, վորի համար յուրաքանչյուր բրիգադա ընտրում է հատուկ փորձված կերակրողներ—ֆուրաժյորներ։ Սրանցից ավագին պետք է ընտրել կոլխոզի անդամների միջից՝ ամենից փորձվածին։ Կերակրողները պետք է ազատվեն կեարկրելու հետ անմիջապես չկապված այլ տեսակի աշխատանքներից։ Ավագն իր ոգնականների մեջ բաժանում է տավարին կերակրելու և խնամելու աշխատանքները՝ սահմանելով հերթապահություն։ Խնամքը կատարվելու է բրիգադայում սահմանված ժամերի և կարգի համաձայն։ Նույնը և ջրելու ու կերակրելու ժամերի վերաբերմամբ։ Ավագ կերակրողը պատասխանատու է բրիգադիրի առաջ՝ անասուններին կերակրելու կանոնները խախտելու համար։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԵՐԵՎԱՆ

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039059

-մա (ստեղծում ար-
—գրում՝ -

[064]

A I/4470